

## 7-8-րդ դարերի ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐՁՅԱՆ

Հոգևոր երաժշտական-բանաստեղծական արվեստի նմուշները՝ շարականները, հայ հին գրականության հարուստ ժառանգության մի մասն են: Դրանք սկզբնավորվել են դեռևս 5-րդ դարում, հետագայում շարունակաբար համալրվել նորերով: Արդի կանոնական շարակնոցը պարունակում է մոտ հազար երկու հարյուր շարական, որոնք հեղինակել են երեսունից ավելի շարականագիրներ:

Հայոց շարականներին նվիրված ուսումնասիրությունները պատկառելի թիվ են կազմում: Դրանցից հիշատակելի են հատկապես Գ. Ավետիքյանի, Ս. Ամատունու, Կոմիտասի, Դ. Խաչկունցի, Ս. Աբեղյանի, Ե. Տնտեսյանի աշխատությունները<sup>1</sup>: Նոր ժամանակներում շարականների՝ հիմնականում բանասիրական-գրականագիտական քննությանն են անդրադարձել Գ. Հակոբյանը, Ն. Թահմիզյանը, Խ. Պալյանը<sup>2</sup> և այլք: Այս հեղինակների ուսումնասիրության առարկան են եղել շարականների ստեղծման ժամանակը, հեղինակները, ժանրի սահմանումը, կառուցվածքը, ձևագրական հիմքերը, առնչությունները սաղմոսների և հոգևոր այլ երգերի հետ, ինչպես նաև բանասիրական, ծիսական բնույթի նմանատիպ այլ հարցեր:

Հայ շարականագիտության բավական հարուստ պատմության ընթացքում, սակայն, շարականների լեզվական քննություն թուուցիկ է կատարվել, առանձին անդրադարձներ, իհարկե, այս կամ այն կերպ հանդիպում են, սակայն լեզվական օրինաչափությունները պարզելուն միտված հրապարակումներ գրեթե չկան:

Դրա պատճառները կարող են տարբեր լինել. նախ և առաջ շարականները հիմնականում համարվել են կանոնիկ լեզու ունեցող, նույնիսկ կանոնից շեղում չենթադրող ստեղծագործություններ: «Շարա-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, Ս. Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, Կոմիտաս, Հոգևածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, Դ. Խաչկունց, Հայոց կրոնական բանաստեղծութիւնը, Թիֆլիս, 1904, Ս. Աբեղյան, Երկեր, հ. 3, Եր., 1968, էջ 526-563, Ե. Տնտեսեան, Նկարագիր երգոց Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ, Ստամբուլ, 1933:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Եր., 1980, Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5-15-րդ դարերում, Եր., 1985, Խ. Պալյան, Ժամակարգութիւնը Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու, Եր., 2005, Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին (5-14-րդ դարեր), Եր., 2012:

կանների արվեստի մեջ ամենից առաջ աչքի է ընկնում ձևի միակերպությունը: Դրա գլխավոր պատճառը նյութի միատեսակությունն է»<sup>3</sup>, - կանոնավոր լեզվի մասին անուղղակիորեն գրում է Մանուկ Աբեղյանը:

Շարականների վերջին ժամանակաշրջանի լեզվական ուսումնասիրություններից կարելի է հիշատակել Հարություն Փալանձյանի աշխատությունը, որտեղ Շարակնոցի Երուսաղեմի 1936 թ. հրատարակության հիման վրա կազմվել է բոլոր բառաձևերի բառացանկը<sup>4</sup>: Օրինակ՝ առանձին բառահոդվածներում բերված են թե՛ «*ողորմեա*» (մոտ 360 հղում), թե՛ «*ողորմեաց*», «*ողորմելով*», «*ողորմեցի*», «*ողորմեցիս*», «*ողորմեցար*» և այլն, այսինքն՝ բառացանկը բոլոր բառագործածությունների համաբարբառն է:

Շարականների լեզվական առանձին հարցերի անդրադարձել ենք և մենք՝ մեր նախորդ ուսումնասիրություններում<sup>5</sup>:

Այսուհանդերձ, մեր շարականների լեզվական քննությունը դեռևս բավարար չի կարելի համարել: 7-8-րդ դարերում ստեղծված շարականները նախորդների նման ևս ունեն կրոնական բովանդակություն (սուրբգրային, համաքրիստոնեական և ազգային սրբախոսական), դավանաբանական և մեկնողական բնույթ: Դրանք, անշուշտ, գերծ չեն կարծրատիպերից, սակայն լեզվական տեսանկյունից, այնուամենայնիվ, ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնցով տարբերվում են նաև այլ ժանրերի ստեղծագործություններից:

Մինչև գրեթե 10-րդ դարը մեր բանաստեղծությունը, մի քանի բացառություններով, գերազանցապես հոգևոր բովանդակություն է ունեցել, և շարականների լեզվական քննությունը կարող է բացահայտել, թե հին հայերենում, և հատկապես գեղարվեստական գրականության մեջ, այդ ստեղծագործությունները լեզվական ինչ կողմերով են աչքի ընկնում և լեզվական ինչ երանգ են հաղորդում դասական հայերենին: Չարեհ եպս. Ազնավորյանը գրում է, որ շարականները «մեր գրական լեզուի ուսումնասիրութեան առաջին աղբիւրն են, և ոսկեդարեան լեզուի մասին շատ մը արուեստական հասկացողութիւնները պէտք է վերատեսութեան ենթարկուին այդ հիմամբ»<sup>6</sup>:

Քննության համար 7-8-րդ դարերի ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ այդ դարերը հայ շարականագրության մեջ համարվում են մի նոր փուլի սկիզբ (առաջին փուլը՝ 5-6-րդ դարեր)<sup>7</sup>, որի ընթացքում ստեղծվում են հարուստ ձև ու բովանդակություն, երբեմն նաև ազգային որոշ գծեր պա-

<sup>3</sup> Մանուկ Աբեղյան, Հոգևոր երգ / Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 537:

<sup>4</sup> Տե՛ս **Յարութին Փալանձեան**, Շարակնոցի բնագրին բառացանկ, Լավալ-Քուեբեկ, Կանադա, 1996:

<sup>5</sup> Տե՛ս **Մ. Սանթրոջյան**, Ստեփանոս Սյունեցու շարականները, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2010, 131.2, էջ 13-23:

<sup>6</sup> **Յարութին Փալանձեան**, նշվ. աշխ., էջ IV:

<sup>7</sup> Շարականների շրջանաբաժանման մասին տե՛ս **Գ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 102:

րունակող շարականներ, որոնք հենվում են նախորդ դարերում արդեն ստեղծված հոգևոր երգերի, մատենագրական ժառանգության, նաև՝ ժամակարգությամբ ու դավանանքով ծիսական հստակ կառուցվածք ձևով բերած հայ եկեղեցու ավանդույթների վրա:

Նոր փուլի սկզբնավորման համար մեծ խթան հանդիսացավ նաև ժամակարգության մեջ կանոնի ներմուծումը: Առիթ ունեցել ենք նշելու, որ ութերորդ դարում եկեղեցական արարողակարգ մուտք գործելով՝ կանոնը նպաստել է ինչպես հոգևոր նոր երգերի ստեղծմանը, այնպես էլ կանոնակարգմանը, հեղինակները ձգտում էին յուրաքանչյուր եկեղեցական տոն հագեցնել ծիսական երգերի հստակ համակարգով:

Մեր քննության մեջ ներառված են 7-8-րդ դարերի գրեթե բոլոր հայտնի շարականագիրների ստեղծագործությունները:

1. Կոմիտաս Աղեցցու (615-628 թթ.) ս. Հռիփսիմյանց նվիրված «Անձինք նուիրեալք» հայտնի շարականը, որը, հայտնի է, կաթողիկոսը ստեղծել է ս. Հռիփսիմեի նահատակության վայրում 618 թ. կանգնեցված նոր ու հրաշակերտ եկեղեցու նավակատիքի առիթով, և այն առաջին անգամ հնչել է եկեղեցու օման ժամանակ: «Անձինք նուիրեալք»-ը հայերեն առաջին վկայաբանական ծավալուն օրհներգն է և հայերեն այբուբենի բանակապով (աքրոստիքոս) գրված առաջին երկը<sup>8</sup>: Ծարականների երաժշտական-բանաստեղծական այս տեսակը «Անձինք նուիրեալք»-ից հետո մեծ տարածում է գտել հետագա դարերում, այնքան, որ այբբենական ծայրակապով գրված շարականները հաճախ ստացել են նաև «անձինք» անվանումը:

2. Սահակ Ձորափորեցի (կաթողիկոս, 677-703)՝ «Կանոն վերացման Ս. Խաչի», «Կանոն Ս. Եկեղեցոյ», «Կանոն Գիւտ խաչին», «Կանոն Ս. Նաւակատեաց Խաչին», «Կանոն Շողակաթին»:

3. Ստեփանոս Սյունեցի (քերական, շարականագիր, մահ. 735 թ.) «Կարգ Աւագ օրհնութեանց Յարութեան» և «Կարգ համօրէն մարտիրոսաց»<sup>9</sup>:

4. Հովհան Օձնեցու (կաթողիկոս, 717-728)՝ «Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն», «Ստեփանոսի նախավկային», «Պետրոսի և Պօղոսի գլխաւոր առաքելոցն», «Որդւոց որոտման» շարականները: Հովհան Օձնեցին է 8-րդ դարում վերստին կարգավորել և խմբագրել մեր Ծարակնոցը:

5. Սահակդուխտի՝ 737 թ. Վահան Գողթնացու նահատակության առիթով ստեղծված «Ջարմանալի է ինձ» սկսվածքով գովքը, որը՝ որպես «Սրբոյն Վահանայ Գողթնացոյն» կանոնական շարական, ներառված է Ծարակնոցում: Ստեփանոս Սյունեցու քրոջ՝ Սահակդուխտի

<sup>8</sup> Տե՛ս նաև **Հ. Բախչինյան**, նշվ. աշխ., էջ 279:

<sup>9</sup> «Ծարակնոցում» հանդիպում է ևս մեկ Ստեփանոս Սյունեցի, որ իբրև ապրել է 5-րդ դարում, սակայն որևէ այլ աղբյուր նրա մասին չի հիշատակում: Ենթադրելի է, որ խոսքը նույն Ստեփանոս Սյունեցու մասին է:

«Սրբուհի Մարիամ» երգի տների առաջին տառերը հոդում են հեղինակի անունը<sup>10</sup>:

Նշված ստեղծագործություններն ամբողջացնում են 7-8-րդ դարերի հայ հոգևոր երգասացության ժանրը, և դրանց քննության միջոցով, կարծում ենք, հնարավոր է կարծիք կազմել այս ժանրի լեզվական օրինաչափությունների մասին ընդհանրապես: Շարականները քաղել ենք Անթիլիասի հրատարակությունից<sup>11</sup>:

Քննության առարկա շարականները ստեղծվել են հայոց լեզվի պատմության կարևոր մի փուլում՝ դասական գրաբարից հետդասականին անցնելու շրջանում<sup>12</sup>, և, բնականաբար, այս կամ այն չափով կրում են մեր լեզվի զարգացման այդ փուլին բնորոշ տարրեր: Շարականների լեզվական-քերականական առանձնահատկությունները դիտարկել ենք փորձելով ցույց տալ շարականներին առավել հատուկ և հայոց լեզվի զարգացմամբ պայմանավորված լեզվական իրողությունները: Մեզ համար հիմնական քննության առարկա է այն, թե շարականներն ունեն արդյոք շեղումներ դասական գրաբարի քերականական ձևերից, թե ոչ, կան արդյոք զուտ շարականներին բնորոշ լեզվական առանձնահատկություններ: Ընտրանքը կատարված է բոլոր հեղինակների բոլոր շարականներից, որոնք դիտվել են իբրև մեկ ամբողջություն:

Գոյականի հոլովումը շարականներում գործածության որևէ շեղում չի դրսևորում դասական ձևերից: Հոլովիչները, հոլովակերտ մասնիկները, հոլովների կազմությունը, հոգնակիակազմությունը հար և նման են 5-րդ դարի օրինաչափություններին, ուստի դրանց չենք անդրադառնում:

Շարականների լեզուն հարուստ է ածականներով, որոնք դրսևորվում են իմաստային, շարահյուսական բազմաձև գործածություններով: Հեղինակները շարունակաբար ձգտում են շարականներին իբրև գեղարվեստական ստեղծագործություններ, իմաստային նրբերանգներ հաղորդել՝ գործածելով մակդիր-ածականներ, բազմանդամ որոշիչներ, որոնց շնորհիվ շարականների որոշ տողերում նկատելի են ածականների կուտակումներ: Թեև պետք է ասել, որ, ի տարբերություն հոգևոր ժանրի այլ երգերի (գովասանք, ներբող, հիմն, ձոն, տաղ և այլն), շարականներում դրանք առավելապես գործածվում են դավանաբանական, սուրբգրային հստակ պատկերներ ստանալու նպատակով:

Շարականներում հանդիպում են թե՛ որակական, թե՛ հարաբերական բազմաթիվ ածականներ՝ *լուսափայլ, կենսատու, երկնաբերձ,*

<sup>10</sup> Տե՛ս **Նորայր արք. Պողարեան**, Սրբուհի Մարիամ, «Հասկ», 1951:

<sup>11</sup> Տե՛ս «Շարական հոգևոր երգոց Սուրբ և ուղղափառ առաքելական եկեղեցույս Հայաստանեայց, յօրինեալ ի սրբոյ թարգմ. մերոց և ի սրբոյ Շնորհալուոյն և յայլոց սրբոց հարց և վարդապետաց», Անթիլիաս, 1997:

<sup>12</sup> Հայերենի շրջանաբաժանման այս փուլի՝ ըստ Գ. Ջահուկյանի բնութագրման՝ «հետ-դասական» և «նախամիջին» ենթաշրջանների մասին տե՛ս Գ. **Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 42-43:

դառնաճաշակ, կողահոս, անլռելի, իսկակից, ժառանգակից, հողեղէն, բազումողորմ, ահաւոր, անքնին, անբաժանելի և այլն:

Ածականակերտ ածանցներից տարածվածությամբ աչքի է ընկնում *ան-* նախածանցը. օրինակները բազմաթիվ են՝ *անարատ, աներեւոյթ, անյայտ, անձանօթ, անվնաս, անթառամ, անշէջ, անմահ, անըստերիւր* (=անսխալ), *անմարմին, անճառ, անեղ, անբոցակէզ, անվայրափակ, անմայր, անեղաշէն* և այլն: Այս և մյուս ածականների գերակշիռ մասը գործածվում է որպէս Աստծո, Հիսուսի, Աստվածածնի բնորոշումներ:

Բազմաթիվ օրինակներով են վկայված «*ան- + հիմք + -ելի*» կառույցով ածականները, որոնք մեծ մասամբ կազմվում են բառակազմական մեկ քայլով, օրինակ՝ *անյաղթելի, անմեկնելի, անհպելի, անտրամադրելի, անկանգնելի, անպարագրելի* և այլն:

Նկատելի է, որ *-աւոր* ածանցով կազմված՝ ածական դիտվող բառերի մի մասը՝ *բռնաւոր, սպասաւոր, ճգնաւոր, ուխտաւոր, զինուոր* (գրաբարի բառարաններն այս բառի համար հղում են տալիս *զինուոր* գլխաբառին)<sup>13</sup> և այլն, զուգահեռ գոյականական կիրառություն ունի: Գոյական անդամին լրացնելիս հստակ դրսևորվում է դրանց ածակա-նական խոսքիմասային արժեքը, օրինակ՝ *երկնաւոր նահատակք, մարմնաւոր պայծառութիւն, անցաւոր մեծութիւն* և այլն: Նույն ածանցով կազմված բառերը խոսքային այլ միջավայրում կարող են ստանալ գոյականի արժեք, ինչպէս *յաղթեաց բռնաւորին* (583)<sup>14</sup>, *զբռնաւորին ջաղիսեցեր զգլուխ* (986), *բարեխօս իւր ուխտաւորացս* (119) և այլն: Այս առիթով կարելի է ասել, որ դեռևս 5-րդ դարում նկատելի՝ *-աւոր* ածանցի խոսքիմասային երկարժեք (ածական-գոյական) կիրառությունը պահպանվել է նաև 7-8-րդ դարերում, և այդ բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշվում է շարահյուսական մակարդակում:

Ածականակերտ մյուս ածանցները ավելի քիչ են հանդիպում, ինչպէս՝ *-եղէն՝ նիթեղէնք, հողեղէն, տարեղէն* և այլն, *-ելի՝ փափագելի, սարսափելի, թաքչելի, -եան՝ եօթնաջահեան, իսրայէլեան, քրիստոսեան, -ական՝ անմարմնական, անսկզբնական, -ային՝ աստուածային* (18 կիրառություն), *երկնային, արեգակնային* և այլն:

Ածականների կազմության մեջ աչքի են ընկնում ածանցի արժեք ստացած *-արար*<sup>15</sup>, *-կերպ, -բան, -կից* և մի քանի այլ արմատներով (լեզ-

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ՝ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Անթիլիաս, 1988:

<sup>14</sup> Շարականներց մեջբերումներ և վկայակոչումներ կատարելիս աշխատանքում նշում ենք Շարակնոցի վերը նշված՝ Անթիլիասի 1997 թ. հրատարակության միայն էջը :

<sup>15</sup> Ինչպէս նշում է Լ. Հովսեփյանը, այս «բաղադրիչը համընկնում է անցյալ կատարյալի կրկնավոր հիմքին, դա հայտնի *արար* բացառությունն է, որով վկայված են մի քանի տասնյակ բարդություններ» (Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 121), ինչպէս նաև նույն աշխ. ծան. 67-ում՝ «Երկրորդ հիմնային *արար* բաղադրիչը իր իմաստագործառական առանձնահատկություններով և ձեռք բերած լայն կիրառությամբ հարում է այսպէս կոչված ածանցակերպներին: Հմմտ. նաև նույն արմատի առանց կրկնության *ար* ձևը, որն արդէն լիովին փոխակերպվել է ածանցի՝ *մեծարել, զարդարել, աստուածարել* և այլն» (նույն տեղում, էջ 367):

վաբանական գրականության մեջ ընդունված է անվանել ածանցակերպ) կազմված բառերը: Մեր շարականներում հանդիպում են նման բազմաթիվ օրինակներ, ինչպես *-արար կենդանարար, կենարար, անմահարար, -կերպ արեգակնակերպ, աղանակերպ, հրեշտակակերպ, աստուածակերպ, -սեր խաւարասեր, մեղասսեր, աստուածասեր, մարդասեր, -տու կենդանատու, կենսատու, լուսատու, -կից խաչակից, չարչարակից, մշտնջենաւորակից, էակից, փառակից* և այլն: Նշված կազմություններում երկրորդ հիմքերը, իհարկե, լիարժեք արմատներ կամ բառաձևեր են, սակայն իմաստագրկման որոշակի աստիճանում կարող են փոխարինել ածանցների, որոնք արդի հայերենում կոչվում են ածանցակերպներ:

*Ամենա-* բաղադրիչով կազմված ածականները թեև ձևով մոտ են համեմատության աստիճանին, սակայն բառակազմական իմաստով համեմատություն չեն արտահայտում, քանի որ այլ եզրերի հետ գուգահետ չունեն, ինչպես *ամենագոր = «ամեն բանում գորեղ», ամենասուրբ = «ամեն ինչով սուրբ», ամենակարող = «ամեն բան կարողացող», ամենաշաղթ = «ամենքին հաղթող»* և այլն: Այս բոլոր մակդիրներն էլ վերաբերում են Աստծուն:

Գերադրական աստիճանի ածականներ են կազմվում իմաստի սաստկացում արտահայտող տարբեր բառերի և կապակցությունների միջոցով (ձիշտ այնպես, ինչպես գրաբարում գերադրական են կազմում *յոյժ, սաստիկ, կարի* մակբայները, որոնք, սակայն, շարականներում այդ իմաստով չեն կիրառվել), օրինակ *գերասպանձ* իշխանութեամբ, *գերաւհրաշ* իմաստունն, *գերիվերոյ* սրբոյն, *գերագոյն* քերովբեից և այլն:

Թվականները շարականներում համակարգային գործածություն չունեն, հանդիպում են միայն մի քանի դիպվածային օրինակներ, որոնք գերազանցապես կապված են Ս. Երրորդության հետ: Քանակական թվականներն առավել հաճախ հանդիպում են բաղադրյալ կազմություններում՝ որպես հիմք՝ կերտելով ածական, մակբայ, օրինակ՝ գոհութիւն *երեքսրբենին, յարեար երեքօրեայ, երեքօրեայ իջմամբ ի դժոխս, եօթնաջահեան լուսով*:

Դերանունները հանդես են գալիս գրաբարի բոլոր տարատեսակներով և մշտապես՝ օրինաչափ հոլովումներով և գործածությամբ: Հետաքրքիր կիրառություն է *զի* հարցական-հարաբերական դերանվան հետևյալ գործածությունը ձայնարկության իմաստով. *ձաներուք եւ տեսէք՝ զի սքանչելիս արար տէր* (989) («որքա՛ն և սքանչելիքներ արարեց տերը»): Կարծում ենք՝ սա սաղմոսների համաբանությամբ կազմված կառույց է *Ճաշակեցէք եւ տեսէք՝ զի քաղցր է տէր* («Ճաշակեցէք և տեսէք՝ որքա՛ն քաղցր է տերը») (Սաղմ. ԼԳ. 9): Մնացած դեպքերում *զի*-ն շաղկապի արժեք ունի:

Դերանուններից հաճախադեպ է գործածվում *որ*-ը՝ բոլոր հոլովաձևերով՝ բարդ ստորադասական նախադասությունների կազմում, օրինակ՝ *եղեր ի վերայ խաչին, գոր յառաջն երգեսց մարգարէն, տեսիլ անճառելի խորհրդոյն, գոր յառաջագոյն ցուցաւ, մտցուք ընդ նեղ դուռն... ո-*

րում ցանկային երկրածին որդիք, ... փայլմամբ սուրբ խաչին, որով երկիրս պանծացաւ, այս է թիւ երանեալ կուսանացն, որք անթառամ պսակեցան, ո՛վ զգաստութեան իմաստուն կուսանացն, որոց ոչ յաղթեաց հեղգութիւն եւ քուն և այլն: Հարաբերական դերանուններով հաճախ սկսվում են նախադասությունները, որ պետք է համարել բանաստեղծական հնարանք, ինչպես՝ «Որում զերկնայինն բացեր ըզդրուն՝ ցուցանելով զանճառելի խորհուրդ», «Յորմէ զարհուրեալ դողային դասք բազմութեան հրէիցն» և այլն:

Բայական համակարգից ուշագրավ են անորոշ դերբայի կիրառությունները՝ հիմնականում նպատակի պարագայի՝ *հասին քարոզել զքնաղ տեսութիւն* (576), անդեմ նախադասության *բազում նեղութեամբ մտանել* (=մտան) *յայն հանգիստն* (580), կամ դերբայական դարձվածի պաշտոններով՝ *զբազուկս քո տարածեցեր... ժողովել* (=ժողովելով) *զհեռացեալսն* (953):

Հանդիպում է *-իլ* վերջավորությամբ անորոշ դերբայ՝ կրավորական իմաստով, օրինակ՝ «Չնորհեաց քաւութիւն ի սմա, որդուց մարդկան *վերադասիլ* (=վերադասվելով, դասվելով) ընդ վերին զուարթունսն» (655), «այսօր ցնճան դասք հրեշտակաց ընդ *հաստատիլ* (=հաստատվելիս) քո ի յերկրի» (660), «ընդ *յայտնիլ* (=հայտնվելիս) սըրբոյ խաչին» (678), «թագաւորն երկնաւոր հաճեցաւ *բնակիլ* (=բնակվել) ի քեզ» (613) և այլն: Շարականների ընձեռած այս օրինակների հիման վրա վստահաբար կարելի է ասել, որ բայաձևերում *-ե->-ի-* փոխանցումը կարող է հանգեցնել բայասեռի փոփոխության ոչ միայն դիմավոր բայերում, այլև անորոշ դերբայում, և դա նկատելի է 7-8-րդ դարերում ստեղծված այս երկերում:

Շարականներում անցյալ դերբայն ամենաշատ կիրառությունն ունի մյուսների համեմատ: Դա պայմանավորված է այս դերբայի շարահյուսական տարբեր պաշտոններ ու դրսևորումներ ունենալու հանգամանքով (որոշիչ, դերբայական դարձված, անդեմ նախադասություն, բաղադրյալ ստորոգյալ, ձևի պարագա և այլն): Անցյալ դերբայների օրինակներ են՝ *արտափայլեալ, աստուածարեալ, տարփացեալ, ընդդիմամարտեալ, վերօրհնեալ, մարմնացեալ, յարուցեալ* և այլն:

Հանդիպում են *-իչ* վերջավորությամբ ենթակայական դերբայի բազմաթիվ օրինակներ՝ համագոյից *հաստիչ*, պտղոյն *քաղցրացուցիչ, ստեղծիչ* բանք, *սպրեցուցիչ* Աստուածածին, ցուցեր *աւետարանիչ*: Բնական է բավական շատ են կիրառված *արարիչ, փրկիչ* բառաձևերը՝ հիմնականում գոյականացած արժեքով՝ անոխակալ *փրկիչ*, Քրիստոս *փրկիչ* աշխարհի, *արարիչդ* ամենայն եղանութեանց, *արարիչն* Աստուած և այլն, որոնց համաբանությամբ էլ կազմվել են *-իչ* պարունակող մյուս բայաձևերը: Դրա հետ մեկտեղ քիչ չեն նաև բայական կիրառությունները *փրկիչ* (ի՛նչ անողը) մեր է, *փրկիչ* տօնողացս և այլն, թեև անվանական և բայական իմաստներն այստեղ այնքան մոտ են, որ խիստ դժվար է դրանք սահմանազատել:

Շարականներում բայի խոնարհման համակարգը ձևաբանական որոշ կարգերի նման նույնպես չունի անկանոնություններ. այն գրեթե ամբողջությամբ համընկնում է դասական շրջանի համակարգին: Բայաձևերի որոշ գործածություններ ունեն ժանրային բացատրություն, այսպես՝ եզակի ներկայի ձևեր են կիրառվում, երբ խոսվում է առանձնական աղոթքի մասին՝ *աղաղակեմ, մաղթեմ*, ընդ որում, ներկայի այդպիսի ձևերը խիստ սահմանափակ կիրառություն ունեն, հանդիպում են միայն Ստ. Սյունեցու մոտ: Ներկայի երրորդ դեմքն է կիրառվում, երբ խոսվում է Հիսուսի, Տիրոջ հատկությունների՝ որպես ընդհանրապես ունակության մասին (պատմական ներկայի իմաստով)՝ *բաշխե, պարզեմ, խորտակե* և այլն: Հոգնակի ներկայի ձևեր են կիրառվում, երբ հեղինակները շեշտադրում են միասնաբար աղաչելը, փառաբանելը՝ *աղաչեմք, փառաբանեմք, բարեբանեմք* և այլն: Թեև պետք է նկատել, որ նշվածները բայաձևերի իմաստային առումներ են և պայմանավորված են այս կամ այն շարականի բովանդակությամբ:

Հանդիպում է գուգաձև խոնարհման մեկ օրինակ՝ *ապաւինեմ//ապաւինիմ*, որի ընտրության մեջ օրինաչափություն չի նկատվում, և դա մնում է իբրև սոսկ գուգահեռ ձև՝ *Աստուածածին անարատ կոյս առ քեզ ապաւինեմք* (937), *Ի քեզ ապաւինեմք Քրիստոս որ գալոցդ ես խաչիւ* (670), *Առ քեզ ապաւինիմք սուրբ աստուածածին* (984), *Առ քեզ ապաւինիմք խորան եւ տաճար աստուծոյ բանին Մարիամ* (940), *Ապաւինիմք ի քո բարեխօսութիւնդ աստուածածին Մարիամ* (967):

Անցյալ կատարյալի ձևերում գերակշռում է ներգործաձև II դեմքի կիրառությունը: Դա ունի ժանրային բացատրություն. շարականները օրհներգություններ են, որոնցում Տիրոջն ուղղված փառաբանությունները մեծ տեղ ունեն հետևյալ կառույցների տեսքով՝ *բացեր ըզդուորն հաւատոյ, յանձն առեր էլանել ի խաչ վասըն մեր, ի խաչիլըն քո մեռուցեր ըզմահ, այրեցեր ըզդրունըս դժոխոց* և այլն: Նույն բայաձևի առատություն ենք նկատում նաև Մաղմոսաց գրքում, ուր Տիրոջն ուղղված փառաբանությունների մեջ շատ են *դու հարեր զամենեսեան, յուսով քով բնակեցուցեր զմեզ, զինու հաճութեամբ քով պսակեցեր զմեզ* տիպի կառույցները:

Առաջին ապառնիի ժամականաձևից մեր շարականներում հանդիպում է մեկ օրինակ՝ *Յաւուր վրիժուց հատուցման ամբարըշտաց վերածիցես ըզմեզ ընդ հոգեղինաց դասն* (988): Դասական շրջանի բնագրերի քննությունը նույնպես ցույց է տալիս, որ առաջին ապառնիի սակավ կիրառություն ունի երկրորդ ապառնիի համեմատ, սակայն ընդամենը մեկ օրինակով գործածված լինելը ապացույց է այն բանի, որ առաջին ապառնիի գործառույթը դասական շրջանից հետո սկսում է էլավելի սահմանափակվել՝ ի հակակշիռ երկրորդ ապառնիի:

Երկրորդ ապառնիի եզակի մեկ նմուշ է՝ *լինիջիք-ը*, որ առաջին և երկրորդ ապառնիների միջանկյալ մի ձևն է ներկայացնում (լինիցիք-լիջիք). «*ուրախ լինիջիք անմահական բաժակաւն*» (578): Այն թերևս կազմ-



վել է *-ի* թույլ բաղադրիչով հիմքերի համաբանությամբ՝ *երթիջիք, կերիջիք* և այլն, և հանդիպում է արդեն 5-րդ դարի բնագրերում. «մարդք սուրբ *լինիջիք* ինձ» (Ելք ԻԲ. 31): Աստվածաշնչի գրաբար բնագրում հանդիպում ենք ներկայի հիմքով կազմված երկրորդ ապառնիի ոչ քիչ այլ ձևեր նույնպես, օրինակ՝ *սպրեցուցանիջիք* (փոխ. ապրեցուսջիք), *առնիջիք* (առջիք), *սպանանիջիք* (սպանջիք), *մեռանիջիք* (մեռջիք) և այլն:

Շարականների ժանրային առանձնահատկություններով են պայմանավորված, թերևս, մակբայների ոչ առատ կիրառությունները: Այստեղ գործողության, ընթացայնության իմաստը գերակշռող չէ, սրանք գործողություն, շարժում չեն պարունակում, այլ բանաստեղծական պատկերներ են, գովք ուղղված Աստծուն, Հիսուսին, Աստվածամորը: Իսկ վերջինները ենթադրում են առավելապես, կայուն հատկանիշ արտահայտող որոշային պաշտոնով անականի գերակշռություն, քան թե պարագայի:

Ձևի մակբայների մեջ գերակշռում են *-(ա)բար, -պէս* ածանցներով կազմվածները՝ *արիաբար* ընդդիմամարտեալ յաղթեաց, *արիաբար* պատերազմեալ, *տիրաբար* սիրեցին, *ճոխաբար* հետեւեցան, նաւարկեալք *հրմտաբար, իշխանաբար* զյարութիւնդ գուշակեաց, *անտեսաբար* անհետեալ, ծընար *անճառապէս*, լուսաւորեցար *անճառապէս*, երեւեցար մարդ *ճրջմարտապէս*, այրեցեր *հրգօրեղապէս*, կենագործեաց *հրգօրեղապէս, մեծապէս* պանծացաւ, *հրաշափառապէս* մեզ ցուցաւ և այլն:

Նկատելի է, որ նախադասության մեջ մակբայները հաճախ ունենում են մեկից ավելի իմաստներ: Այսպես *անդադար* մակբայը կարող է ընկալվել թե՛ ձևի, թե՛ չափ ու քանակի իմաստներով, ինչպես բարեխօսեա *անդադար, անդադար* բարեբանեսցուք և այլն:

Որոշ դեպքերում, հատկապես *-ումն* ածանց ունեցող բայանուն-գոյականների դեպքում, մակբայ են դիտվում բայանուն-գոյականին լրացնող պարագայական բառերը, ինչպես *հրեշտակակերպ* տեսլեամբ, *արեգակնակերպ* փայլմամբըն, *յանդրանկածախ* սատակմանէ և այլն:

Շաղկապներից ամենահաճախադեպն է *զի-ն*՝ տարբեր իմաստներով, օրինակ՝ «որովհետև» իմաստով՝ «մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս, զի ծանեան, եթէ երազ է» (579), «երջանիկ ճակատամարտք յայտնեցան անպարտելիք, զի զաստուած բոլորից տիրաբար սիրեցին» (586): Նկատելի է, որ *զի* շաղկապը «որովհետև» իմաստով գործածվելու դեպքում ստորոգյալը գերազանցապես դրվում է անցյալ ժամանակով: Հանդիպում են նաև բաղադրյալ ստորոգյալի հետ գործածության օրինակներ՝ «ի վիմէն կենդանութեան ճաշակեցաք՝ զի քաղցր է տէր» (951) և այլն: «Որպեսզի» իմաստով՝ «ցնծութեամբ տօնեսցուք գլիշատակս նոցունց, զի եւ նոցին հաղորդեսցուք փրկութեան» (581), «եկն եւ փրկեաց զամենայն արարածս. զի զանուն տեսարն կարդասցուք» (951) և այլն: Այս դեպքում էլ ստորոգյալը գերազանցապես ապառնի ժամանակով է դրվում: «Որ» իմաստով՝ «ճաշակեցաք եւ տեսաք, զի քաղցր էւ ուղիղ էւ տէր» (937):

Հիմք ընդունելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ շարականների ձևաբանական համակարգին բնորոշ է գրաբարի կանոնիկ

ձևերի գործածությունը: Հոլովական և բայական համակարգերը գրեթե չեն տարբերվում դասական շրջանի օրինաչափություններից, այդ թվում՝ եղանակային ձևերի հարացույցների կազմության, վերջավորությունների ու հիմքերի ձևավորման, դրանց իմաստների առումներով: Դրանք ունեն առավելապես ժանրով պայմանավորված քերականական այս կամ այն ձևի գործածության գերակշռություն: Ասենք նաև, որ տարբեր հեղինակների շարականներում քերականական ձևերի բազմազանություն նույնպես չի դրսևորվում. շարականների հեղինակները ոչ թե ձևաբանական միջոցների բազմազանությամբ, այլ բառիմաստի, շարահյուսական կառույցների և ոճական հնարքների միջոցով են ձգտում միտքը արտահայտիչ դարձնել:

**Բանալի բառեր** - *հոգևոր գրականություն, Շարակնոց, շարական, կանոն, ժանրեր, ձևաբանություն, խոսքի մասեր, հոլովում, խոնարհում*

**МАРИ САНТУРДЖЯН – Некоторые семантические и морфологические особенности шараканов VII–VIII веков.** – В VII–VIII веках развитие шараканов вступает в новый этап. Творившие в этот период авторы (Комитас Ахцеци, Саак Дзорапореци, Овнан Одзнеци, Степанос Сюнеци, Саакадухт) создают самые разнообразные сочинения в этом жанре на библейские, общехристианские и национальные темы, а в богослужение вводится канон. В статье анализируются присущие шараканам морфологические особенности, при этом выясняется, отклоняются ли тексты этого периода от классических форм габара.

Анализ примечательных языковых особенностей существительного, прилагательного, числительного, местоимения, глагола и других частей речи показывает, что морфологическая система шараканов, созданных в VII–VIII вв., почти не отклоняется от классического армянского языка. Что касается различий, они носят смысловой и синтаксический характер.

**Ключевые слова:** *духовная литература, шаракан, канон, жанры, морфология, части речи, склонение, спряжение*

**MARI SANTURJYAN – Some Semantic and Morphological Peculiarities of Sharakans of VII-VIII Centuries.** – In the VII-VIII centuries Armenian Holy Hymn Canon (Sharakan) History initializes a new stage: authors working during this period (Komitas Aghdzetsi, Sahak Dzoraporetsi, Hovhan Odznetsi, Stepanos Syunetsi, Sahakadukht) create Sharakans rich in scriptural, Christian and national Holy Hymn topics, Canon is included in chronicles.

Through linguistic investigation of Sharakans, it is possible to make an idea about the linguistic patterns of this genre. This article investigates morphological realities of Sharakans, considering which we especially tried to find out if Sharakans have deviations from Grabar (old Armenian) or not.

Investigating some noticeable linguistic characteristics of such parts of speech as nouns, adjectives, numerals, pronouns, verbs, etc., it is found out that there is little difference between the morphological system of Sharakans and classic Armenian. The differences have semantic and syntactic character.

**Key words:** *Spiritual literature, book of Sharakans (Sharaknots), canon, genres, morphology, parts of speech, declension, conjugation*